




ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ





Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկաների եւ կանոնների հիման վրա, ինչպես նաեւ հաշվի են առնվում պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի շրջանակում կնքված համաձայնագրերի պահանջները:





- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցող ընկերությունների եւ սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2021 թվականի փետրվարի 1-ից:
- Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ էլեկտրաէներգիայի սակագները կարող են վերանայվել 6 ամսից ոչ շուտ, սակայն ՀԾԿՀ-ն սովորաբար էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերանայում է տարեկան արդյունքներով:
- Հաշվի առնելով նշվածը՝ 2021 թվականի սեպտեմբերի 25-ից ՀԾԿՀ-ի նախաձեռնությամբ սկսվել է էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցողների սակագների եւ ՀԷՑ-ի սակագնային մարժայի վերանայման գործընթաց:





2022թ. փետրվարի 1-ից մինչև 2023թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնները դասակարգենք հետևյալ հիմնական խմբերում՝


- ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն՝ համաձայն վարկային պայմանագրերի,
- ՀՀ եւ ՌԴ կառավարությունների միջեւ ստորագրված համաձայնագրով նախատեսված պարտավորությամբ պայմանավորված "Գազպրոմ Արմենիա" ՓԲԸ-ի "Հրազդան-5" կայանի գործունեություն,
- Էլեկտրաէներգետիկական համակարգում 2021թ. իրականացված ներդրումների փոխհատուցում մաշվածության եւ շահույթի տեսքով,
- Էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կառուցվածքի, ՎԷՌ փոքր կայանների, ՋԵԿ-երին վաճառվող բնական գազի սակագների եւ արտարժույթների փոխարժեքների փոփոխություն,
- Միջուկային վառելիքի ծախսի փոփոխություն,
- Էլեկտրական էներգիայի արտադրության եւ սպառման նախորդ 12 ամիսներին կանխատեսվող եւ փաստացի հաշվեկշիռների շեղման արդյունքում ձեւավորված փոխհատուցման գումար,
- Էլեկտրաէներգետիկական համակարգում ծախսերի փոփոխություն:





ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերն **ավելացել են շուրջ 21.23 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 4.19 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

մլրդ դրամ



- "Հայկական ատոմային էլեկտրակայան" ՓԲԸ
- "Բարձրավոլտ էլեկտրացանցեր" ՓԲԸ
- Այլ ընկերություններ





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2022թ. սակագների վերանայում


ՀՀ ԵԼ ՌԴ կառավարությունների միջեւ ստորագրված համաձայնագրով նախատեսված «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման արդյունքում ծախսերն **ավելացել են շուրջ 14.5 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 2.86 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):





Իրականացված նոր կապիտալ ներդրումների փոխհատուցում՝ հաշվի առնելով կուտակված մաշվածությունը: Արդյունքում, մաշվածությունն ու շահույթն **ավելացել են շուրջ 9.9 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 1.95 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

մլրդ դրամ



■ "Չայաստանի էլեկտրական ցանցեր" ՓԲԸ
■ Այլ ընկերություններ

■ "Միջազգային էներգետիկ կորպորացիա" ՓԲԸ





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2022թ. սակագների վերանայում

Էլեկտրաէներգիայի արտադրության ու սպառման կառուցվածքի, ՎԷՌ փոքր կայանների, ՋԵԿ-երին վաճառվող բնական գազի սակագների եւ արտարժույթների փոխարժեքների փոփոխությունը համակարգի վրա ունեցել է **գումարային դրական ազեցություն՝ շուրջ 12.85 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնում է **2.53 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող Էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

№	Անվանումներ	01.02.2021- 01.02.2022 սակագնային տարի	01.02.2022- 01.02.2023 սակագնային տարի	Տարբերու թյուն
		մլն կՎտժ	մլն կՎտժ	մլն կՎտժ
1	ԸՆԴԱՄԵՆԸ Էլեկրաէներգիայի առաքում, այդ թվում՝	6413.95	6937.91	-37.03
1.1	«ՅԱԵԿ» ՓԲԸ	1942.20	2395.20	+453.0
1.2	«Երեւանի ՋԵԿ» ՓԲԸ (ներառյալ ներքին սպառման մասով հաղորդման ցանցի կորուստները)	537.52	609.26	+71.74
1.3	«Արմփատեր» ՓԲԸ	343.96	1208.06	+864.1
1.4	«Յրագդան-5» կայան	0	77.82	+77.82
1.5	«ՅրագՋԵԿ» ԲԲԸ	1090.0	60.21	-1029.79
1.6	«ՄԵԿ» ՓԲԸ	380.03	380.01	-0.02
1.7	«ՔոնթուրԳլոբալ Յիդրո կասկադ» ՓԲԸ	941.73	944.42	+2.69
1.8	Փոքր կայաններ եւ ներկրում	1178.52	1262.93	+84.41
2	Կորուստները հաղորդման ցանցում	105.27	106.51	+1.24
3	Մուտքը բաշխիչ ցանց	6308.69	6831.40	+522.71





Էլեկտրաէներգետիկական համակարգի 2022թ. սակագների վերանայում

01.02.2021-01.02.2022
սակագնային տարի

01.02.2022-01.02.2023
սակագնային տարի

\$ — 493,76 —> 477,45

€ — 574,79 —> 552,17

¥ — 4,712 —> 4,18





«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում օգտագործվող միջուկային վառելիքի ծախսը **սվազել է շուրջ 2.3 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՅ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **սվազեցնում է 0.45 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՅ-ն):





01.11.2020-01.11.2021 ժամանակահատվածում Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի եւ հաշվարկային սակագնային մարժաների տարբերության հետեւանքով ձեւավորվել է օգուտ, որն ընկերության սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ հաշվարկվել է շուրջ **4.32 մլրդ դրամ**:

Նշված ծախսը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը նվազեցնում է 0.85 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ ծախսային հոդվածների վերլուծության արդյունքում գործող սակագների հաշվարկների համեմատ տեղի են ունեցել **շահագործման եւ պահպանման ծախսերի շուրջ 2.32 մլրդ դրամով (առանց ԱԱՀ-ի)** կրճատում, որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.46 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):





Էլեկտրաէներգիայի սակագների վրա ազդող գործոնները

ԴՐԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒՅՈՒՆ

Վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն



+ 21.23 մլրդ դրամ
(+ 4.19 դրամ/կՎտժ)

«Հրազդան-5» կայանի գործունեություն




+ 14.5 մլրդ դրամ
(+ 2.86 դրամ/կՎտժ)

Նոր ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում



+ 9.9 մլրդ դրամ
(+ 1.95 դրամ/կՎտժ)

Արտադրության եւ սպառման կառուցվածքի, ՎԵՌ կայանների սակագների, գազի գնի եւ արտարժույթի փոխարժեքների փոփոխություն



- 12.85 մլրդ դրամ
(- 1.76 դրամ/կՎտժ)

Միջուկային վառելիքի ծախսի կրճատում



- 2.3 մլրդ դրամ
(- 0.45 դրամ/կՎտժ)

ՀԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի սակագնային մարժայի տարբերություն



- 4.32 մլրդ դրամ
(- 0.85 դրամ/կՎտժ)


Շահագործման եւ պահպանման ծախսերի կրճատում



- 2.32 մլրդ դրամ
(- 0.46 դրամ/կՎտժ)



ԸՆԴԱՄԵՆԸ ազդեցությունը



+ 23.84 մլրդ դրամ
(+ 4.7 դրամ/կՎտժ)



Էլեկտրաէներգետիկական համակարգի 2022թ. սակագների վերանայում

Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների գործող և առաջարկվող հասույթները 2022-2023թթ.

	2021-22 գործող սակագնով նախատեսված հասույթ (առանց ԱԱՀ)	Առաջարկվող սակագնով նախատեսված հասույթ (առանց ԱԱՀ)	Տարբերություն	Վերջնական սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների ազդեցությունը (ներառյալ ԱԱՀ)
	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ	դրամ/կՎտժ
ՀԱԷԿ	23,931.24	38,134.15	14,202.92	2.80
Երևանի ԶԷԿ	12,492.30	10,454.02	-2,038.28	-0.40
Հրազդանի ԶԷԿ / Արմփատեր	49,184.47	46,705.26	-2,479.20	-0.49
Հրազդանի 5-րդ բլոկ	0.00	17,139.21	17,139.21	3.38
ՄԷԿ	6,663.39	7,480.95	817.56	0.16
Քոնյաթուր Գլոբալ	17,666.24	18,201.53	535.30	0.11
Այլ կայաններ	26,853.64	29,217.63	2,363.99	0.47
ԲԷՑ, ծառայություններ մատուցողներ	3,927.52	11,887.26	7,959.74	1.57
Ընդամենը կայաններ և ծառայություն մատուցողներ	140,718.79	179,220.01	38,501.22	7.59
<i>Իրացում մեծածախ շուկայում</i>	<i>0.00</i>	<i>-4,279.15</i>	<i>-4,279.15</i>	<i>-0.84</i>
Ընդամենը կայաններ և ծառայություն մատուցողներ՝ մանրածախ շուկայի մասով	140,718.79	174,940.87	34,222.08	6.75
ՀԷՑ, այդ թվում				-2.05
Անհրաժեշտ հաշվարկային հասույթ	60,531.54	59,022.53	-1,509.01	-0.30
ՀԷՑ-ի սպառման կառուցվածքով և վաճառքի միջին սակագնի փոփոխությամբ պայմանավորված պայմանավորված փոփոխություն			-8,874.28	-1.75
Ընդամենը անհրաժեշտ հասույթ մանրածախ շուկայում	201,250.33	233,963.40	32,713.07	4.70



Էլեկտրաէներգետիկական համակարգի 2022թ. սակագների վերանայում

Էլեկտրաէներգիայի արտադրության եւ ծառայությունների մատուցման առաջարկվող սակագները (առանց ԱԱՀ-ի)

Անվանում	Դրույքներ	Սակագին
ՔոնթրոլըրԳլոբալ Յիդրո կասկադ	7.316 դր/կՎտժ 3131.37 դր/կՎտ/ամիս	-
Յրազդան-5	25.201 դր/կՎտժ 4492.46 դր/կՎտ/ամիս	-
Յրազդանի ՁԷԿ	33.460 դր/կՎտժ 979.95 դր/կՎտ/ամիս	-
Արմփաուեր (սակագները սահմանվել են ՅԾԿՅ 10.12.2021 նիստում)	19.710 դր/կՎտժ 6243.36 դր/կՎտ/ամիս	-
ՅԱԷԿ	-	15.921 դր/կՎտժ
ՄԷԿ	-	19.686 դր/կՎտժ
Երևանի ՁԷԿ, արտադրության սակագին	-	20.794 դր/կՎտժ
Յաշվեկշռման նվազագույն սակագին	-	15.921 դր/կՎտժ
Յաշվեկշռման առավելագույն սակագին	-	29.997 դր/կՎտժ
Փոքր կայաններ	-	24.108 դր/կՎտժ
Յաղորդող	-	1.4573 դր/կՎտժ
Յամակարգի օպերատոր	-	0.2367 դր/կՎտժ
Շուկայի օպերատոր	-	0.0529 դր/կՎտժ





ՀԵՑ-ի կողմից Էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները

№	Բաշխման ցանցին միացման լարման մակարդակը	Առաջարկ (01.02.2022-01.02.2023)	
		դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի)	դրամ/կՎտժ (Ներառյալ ԱԱՀ-ն)
1	110 կՎ լարմամբ միացման համար	1.550	1.860
2	35 կՎ լարմամբ միացման համար	2.9225	3.507
3	6(10) կՎ լարմամբ միացման համար	7.5575	9.069
4	0.38(0.22) կՎ լարմամբ միացման համար	16.975	20.370





ՀԷՑ-ի կողմից վաճառվող էլեկտրաէներգիայի առաջարկվող սակագներ (ներառյալ ԱԱՀ-ն)

№	Վերջնական սպառողների խմբերը	Սպառում 01.02.2021- 01.02.2022	Գործող սակագին	Առաջարկ (01.02.2022-ից)	Տարբերույթ ուն
		մլն կՎտժ	դրամ/կՎտժ	դրամ/կՎտժ	դրամ/կՎտժ
1	ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ սոցիալապես անապահով ընտանիքներ (բնակիչ-բաժանորդների շուրջ 11%-ը)	195.0			
	ցերեկային սակագին	152.4	29.99	29.99	0.00
	գիշերային սակագին	42.6	19.99	19.99	0.00
2	0,38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչներ (բնակիչ-բաժանորդների շուրջ 55%-ը)	609.8			
	ցերեկային սակագին	463.3	44.98	46.48	1.50
	գիշերային սակագին	146.6	34.98	36.48	1.50
3	0,38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական 201-ից մինչև 400 կՎտժ սպառում ունեցող բնակիչներ (բնակիչ-բաժանորդների շուրջ 25%-ը)	673.4			
	ցերեկային սակագին	495.8	44.98	48.48	3.50
	գիշերային սակագին	177.6	34.98	38.48	3.50
4	0,38 կՎ լարմամբ սնվող՝ ամսական 400 կՎտժ-ից ավել սպառում ունեցող բնակիչներ	537.6			
	ցերեկային սակագին	392.9	47.98	53.48	5.50
	գիշերային սակագին	144.7	37.98	43.48	5.50
5	0,38 կՎ լարմամբ սնվող այլ սպառողներ (բացառությամբ բնակչության)	1158.1			
	ցերեկային սակագին	867.6	47.98	53.48	5.50
	գիշերային սակագին	290.5	37.98	43.48	5.50
6	6 (10) կՎ լարմամբ սնվող սպառողներ	1726.7			
	ցերեկային սակագին	1250.8	44.98	50.48	5.50
	գիշերային սակագին	475.9	34.98	40.48	5.50
7	35 կՎ լարմամբ սնվող սպառողներ	263.9			
	ցերեկային սակագին	182.2	38.98	44.48	5.50
	գիշերային սակագին	81.7	34.98	40.48	5.50
8	110 կՎ լարմամբ սնվող սպառողներ	920.1			
	ցերեկային սակագին	623.0	36.48	41.98	5.50
	գիշերային սակագին	297.0	32.48	37.98	5.50
ԸՆԴԱՄԵՆԸ		6084.5	41.44	46.14	4.70





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ